

Համարը N Տիպը Հրաման Սկզբնաղբյուրը ՀՀԳՏ 2009.06.19/20(338) Հոդ.234	Տեսակը Մայր Կարգավիճակը Գործում է Ընդունման վայրը Երևան
Ընդունող մարմինը ՀՀ կառավարության ատրնթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե	Ընդունման ամսաթիվը 10.06.2009
Ստորագրող մարմինը ՀՀ կառավարության ատրնթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահ	Ստորագրման ամսաթիվը 10.06.2009
Վավերացնող մարմինը Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 29.06.2009	Վավերացման ամսաթիվը Ուժը կորցնելու ամսաթիվը

Կատարել է փոփոխություններ հետևյալ փաստաթղթերում՝	Յուրաքանչյուր փոփոխվողին համապատասխանող ինկորպորացիան՝
ԱնԳԻԿԻ, 23.04.2009, N 99-Ն	ԱնԳԻԿԻ, 23.04.2009, N 99-Ն

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՀՐԱՄԱՆԸ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 23-Ի N 99-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

«Գրանցված է»
ՀՀ արդարադատության
նախարարության կողմից
12 հունիսի 2009 թ.
Պետական գրանցման թիվ 32209222

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵ

10 հունիսի 2009 թ.
ք. Երևան

N 139-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ
ԳՈՒՅՔԻ ԿԱՂԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ
23-Ի N 99-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի 49-րդ հոդվածի և «Իրավական ակտերի
մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի պահանջներով՝
Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր **անշարժ գույքի կադաստրի պետական** կոմիտեի նախագահի 2009 թվականի ապրիլի 23-ի «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման և գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման վճարների ցանկը հաստատելու մասին» N 99-Ն հրամանով հաստատված **Գույքի** նկատմամբ իրավունքների **պետական** գրանցման և գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման վճարների ցանկը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանը սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ համաձայնեցման:

3. Սույն հրամանը սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ **պետական** գրանցման:

4. Սույն հրամանով հաստատված **Գույքի** նկատմամբ իրավունքների **պետական** գրանցման և գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման վճարների ցանկի 1-ին Բաժնի 1.1., 1.3., 2-րդ Բաժնի 2.2., 4-րդ Բաժնի 4.2. կետի 1), 3) ենթակետերը, 4.3. կետի 1), 3), 4), 5) ենթակետերը, 4.4. կետի 1) ենթակետը, 4.5. կետի 1), 2), 3), 4), 5), 6), 7) ենթակետերը, 4.6. կետի 1), 2), 3) ենթակետերը, 5-րդ Բաժնի 5.1. կետի 4) ենթակետը, 5.2. կետի 1), 3) ենթակետերը, 5.3. կետի 1), 3) ենթակետերը, 5.5. Բաժնի 1), 2), 3), 4), 5), 6), 7) ենթակետերը, 5.6. կետի 1), 2), 3) ենթակետերը, 5.11 կետը տարածվում են սույն թվականի հունիսի 11-ից ծագած հարաբերությունների վրա:

5. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

Կոմիտեի նախագահ՝

Ե. Զախարյան

Հավելված

Համաձայնեցված է
ՀՀ ֆինանսների նախարարության հետ
12 հունիսի 2009 թ.
*N 527-Ն **հրաման***

Հաստատված է
ՀՀ կառավարությանն առընթեր
անշարժ գույքի կադաստրի
***պետական** կոմիտեի նախագահի*
2009 թ. հունիսի 10-ի
*N **139-Ն** հրամանով*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ
ԳՈՒՅՔԻ ԿԱՂԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 23-Ի
«ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԻՐԱՎՈՒՆԹՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ԳՐԱՆՑՎԱԾ
ԻՐԱՎՈՒՆԹՆԵՐԻ ԵՎ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ
ՏՐԱՄԱՂԻՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 99-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ

ԿԱՏԱՐԵԼ ՀԵՏԵՎՅԱԼ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր **անշարժ գույքի կադաստրի պետական** կոմիտեի նախագահի 2009 թվականի ապրիլի 23-ի «**Գույքի** նկատմամբ իրավունքների **պետական** գրանցման և գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման վճարների ցանկը հաստատելու մասին» N 99-Ն հրամանով հաստատված **Գույքի** նկատմամբ իրավունքների **պետական** գրանցման և գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման վճարների ցանկը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Ց Ա Ն Կ

ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ

1. ՉԱՓԱԳՐՈՒՄ

- | | | |
|-----|---|------------|
| 1.1 | Շենքերի և շինությունների չափագրում մինչև 300 քմ-ը ներառյալ յուրաքանչյուր 1քմ-ը. | 20
դրամ |
| 1.2 | Շենքերի և շինությունների չափագրում 300 քմ-ից ավելի յուրաքանչյուր 1քմ-ը. | 30
դրամ |
| 1.3 | Հողամասերի չափագրում՝ մինչև 1200 քմ-ը ներառյալ յուրաքանչյուր 1քմ-ը. | 3 դրամ |
| 1.4 | Հողամասերի չափագրում 1200 քմ-ից ավելի յուրաքանչյուր 1քմ-ը. | 4 դրամ |
| 1.5 | Գյուղատնտեսական նշանակության, բնության հատուկ պահպանվող տարածքների, անտառային ֆոնդի հողերի չափագրում՝ յուրաքանչյուր 100 քմ-ը. | 20
դրամ |

2. ԿԱՄԵՐԱԼ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

- | | | |
|-----|---|--------------|
| 2.1 | Անշարժ գույքի սեփականության (օգտագործման), վարձակալության, գրավի իրավունքի գրանցման վկայականի կազմում (A3, A4 ֆորմատի). | 1000
դրամ |
| 2.2 | Գյուղատնտեսական նշանակության հողերի սեփականության (օգտագործման), վարձակալության, գրավի իրավունքի գրանցման վկայականի կազմում (A3, A4 ֆորմատի). | 500
դրամ |
| 2.3 | Լրացուցիչ յուրաքանչյուր A3, A4 ֆորմատի ներդիրի կազմում. | 600
դրամ |

3. ԿԱԴԱՏՐԱՑԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

- | | | |
|-----|---|--------------|
| 3.1 | Շենքերի և շինությունների յուրաքանչյուր միավորի գնահատման և գնահատման ամփոփ հաշվարկի տրամադրման համար. | 1000
դրամ |
| 3.2 | Հողամասերի յուրաքանչյուր միավորի գնահատման և գնահատման ամփոփ հաշվարկի տրամադրման համար. | 1000
դրամ |

4. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՄԻԱՎՈՐԻ ԵՎ ԴՐԱ ՆԿԱՏՄԱՍԲ ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ

- | | | |
|-----|---|--|
| 4.1 | Բազմաբնակարան շենքերի բնակարանների միավորի և (կամ) բազմաբնակարան շենքի շինությունների սեփականատերերին ընդհանուր | |
|-----|---|--|

- բաժնային սեփականության իրավունքով պատկանող տարածքների, ինչպես նաև շենքի պահպանման և սպասարկման համար անհրաժեշտ հողամասերի, որոնք չեն հանդիսանում այլ անձանց սեփականություն և դրանց նկատմամբ գրանցված իրավունքների ու սահմանափակումների վերաբերյալ միասնական տեղեկանք տրամադրելու համար.
- 1) մինչև 160 քմ մակերեսով Երևան քաղաքի տարածքում 7000
դրամ
 - 2) 160 քմ և ավելի մակերեսով Երևան քաղաքի տարածքում 20000
դրամ
 - 3) մինչև 160 քմ մակերեսով Երևան քաղաքից դուրս 7000
դրամ
 - 4) 160 քմ և ավելի մակերեսով Երևան քաղաքից դուրս 10000
դրամ
- 4.2 Բնակելի նշանակության **անշարժ գույքի** միավորի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների ու սահմանափակումների վերաբերյալ միասնական տեղեկանք տրամադրելու համար.
- 1) մինչև 200 քմ մակերեսով շինությամբ Երևան քաղաքի տարածքում 7000
դրամ
 - 2) 200 քմ և ավելի մակերեսով շինությամբ Երևան քաղաքի տարածքում 30000
դրամ
 - 3) մինչև 300 քմ մակերեսով շինությամբ Երևան քաղաքից դուրս 7000
դրամ
 - 4) 300 քմ և ավելի մակերեսով շինությամբ Երևան քաղաքից դուրս 20000
դրամ
- 4.3 Չկառուցապատված հողամասերի միավորի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների ու սահմանափակումների վերաբերյալ միասնական տեղեկանք տրամադրելու համար.
- 1) մինչև 1000 քմ ներառյալ մակերեսով Երևան քաղաքի տարածքում 7000
դրամ
 - 2) 1000 քմ-ից ավելի մակերեսով Երևան քաղաքի տարածքում 20000
դրամ
 - 3) մինչև 1200 քմ ներառյալ մակերեսով Երևան քաղաքից դուրս 7000
դրամ
 - 4) 1200 քմ-ից ավելի մակերեսով Երևան քաղաքից դուրս 10000
դրամ
- 5) ՀՀ Շիրակի և Լոռու մարզերի բնակավայրերում **պետական** գնման պայմանագրով նախատեսված բնակարանային ֆոնդի կառուցապատման համար օտարվող հողամասերի միավորի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ միասնական տեղեկանք տրամադրելու համար. 1000
դրամ
- 4.4 Հասարակական և (կամ) արտադրական շենքերի, շինությունների (բացառությամբ գյուղատնտեսական արտադրական նշանակության **անշարժ գույքի**), ինչպես նաև բնակելի շենքերում՝ նախագծով նախատեսված ընդհանուր օգտագործման շինություններ (տարածքներ) չհանդիսացող ոչ բնակելի **անշարժ գույքի** միավորի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների ու սահմանափակումների վերաբերյալ միասնական տեղեկանք տրամադրելու համար Երևան քաղաքի

տարածքում.		
1)	մինչև 100 քմ մակերեսով շինությամբ	10000 դրամ
2)	100 քմ-ից մինչև 200 քմ մակերեսով շինությամբ	15000 դրամ
3)	200 քմ-ից մինչև 500 քմ մակերեսով շինությամբ	20000 դրամ
4)	500 քմ-ից մինչև 1000 քմ մակերեսով շինությամբ	25000 դրամ
5)	1000 քմ-ից մինչև 5000 քմ մակերեսով շինությամբ	30000 դրամ
6)	5000 քմ-ից մինչև 10000 քմ մակերեսով շինությամբ	65000 դրամ
7)	10000 քմ և ավելի մակերեսով շինությամբ	80000 դրամ
4.5	Հասարակական և (կամ) արտադրական շենքերի, շինությունների (բացառությամբ գյուղատնտեսական արտադրական նշանակության անշարժ գույքի), ինչպես նաև բնակելի շենքերում՝ նախագծով նախատեսված ընդհանուր օգտագործման շինություններ (տարածքներ) չհանդիսացող ոչ բնակելի անշարժ գույքի միավորի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների ու սահմանափակումների վերաբերյալ միասնական տեղեկանք տրամադրելու համար Երևան քաղաքից դուրս.	
1)	մինչև 100 քմ մակերեսով շինությամբ	7000 դրամ
2)	100 քմ-ից մինչև 200 քմ մակերեսով շինությամբ	10000 դրամ
3)	200 քմ-ից մինչև 500 քմ մակերեսով շինությամբ	15000 դրամ
4)	500 քմ-ից մինչև 1000 քմ մակերեսով շինությամբ	20000 դրամ
5)	1000 քմ-ից մինչև 5000 քմ մակերեսով շինությամբ	25000 դրամ
6)	5000 քմ-ից մինչև 10000 քմ մակերեսով շինությամբ	35000 դրամ
7)	10000 քմ և ավելի մակերեսով շինությամբ	50000 դրամ
4.6	Գյուղատնտեսական արտադրական նշանակության անշարժ գույքի միավորի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների ու սահմանափակումների վերաբերյալ միասնական տեղեկանք տրամադրելու համար.	
1)	մինչև 1000 քմ մակերեսով շինությամբ	10000 դրամ
2)	1000 քմ-ից մինչև 5000 քմ մակերեսով շինությամբ	15000 դրամ
3)	5000 քմ և ավելի մակերեսով շինությամբ	20000 դրամ
4.7	Գյուղատնտեսական նշանակության հողամասի միավորի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների ու սահմանափակումների	
		1000 դրամ

վերաբերյալ միասնական տեղեկանք տրամադրելու համար.	
4.8 Գյուղատնտեսական նշանակության հողամասի միավորի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների ու սահմանափակումների վերաբերյալ այլ տեղեկանք տրամադրելու համար.	500 դրամ
4.9 Մերվիտուտի առկայության վերաբերյալ տեղեկանք տրամադրելու համար.	1000 դրամ
4.10 Հիփոթեքի կամ այլ իրավունքների և սահմանափակումների առկայության վերաբերյալ տեղեկանք տրամադրելու համար.	1000 դրամ
4.11 Անշարժ գույքի միավորի մակերեսների վերաբերյալ տեղեկանք տրամադրելու համար.	1000 դրամ
4.12 Անշարժ գույքի միավորի կազմում՝ հողամասի և (կամ) շենքեր, շինությունների կադաստրային արժեքի վերաբերյալ տեղեկանք տրամադրելու համար.	1000 դրամ
4.13 Ընդհանուր սեփականության դեպքում, սեփականատերերի թվի, բաժնեմասի չափերի վերաբերյալ տեղեկանք տրամադրելու համար.	1000 դրամ
4.14 Անավարտ (կիսակառույց) շինությունների ավարտվածության աստիճանի վերաբերյալ տեղեկանք տրամադրելու համար.	1000 դրամ
4.15 Շարժական գույքի նկատմամբ գրանցված իրավունքների վերաբերյալ տեղեկանք տրամադրելու համար.	1000 դրամ
4.16 Անշարժ գույքի հասցեների վերաբերյալ տեղեկանք տրամադրելու համար.	1000 դրամ
4.17 Կադաստրային գործի փաստաթղթերի քսերոպատճենի յուրաքանչյուր էջի համար.	50 դրամ
4.18 ՀՀ անշարժ գույքի պետական միասնական տեղեկատվական շտեմարանից անձին պատկանող անշարժ գույքի (երի) վերաբերյալ տեղեկանք տրամադրելու համար՝ մեկ անձի հաշվարկով.	1000 դրամ
4.19 Կադաստրային քարտեզներում արտահայտված տեղեկատվության տրամադրման համար. Բազային շերտերում արտահայտված տեղեկատվություն (1 հա).	5000 դրամ
1) Երևան քաղաքի համար	
2) Քաղաքային համայնքների համար (Երևան քաղաքի տարածքից բացի) կառուցապատված հատվածներ	2000
3) Գյուղական համայնքների կառուցապատված հատվածների համար	դրամ
4) Քաղաքային (Երևան քաղաքի տարածքից բացի) և գյուղական համայնքների չկառուցապատված հատվածների և այլ տարածքների համար	1000 դրամ
	300 դրամ
4.20 Թեմատիկ շերտերում արտահայտված տեղեկատվության տրամադրման համար (1շերտ) յուրաքանչյուր համայնք,	500 դրամ
4.21 Կադաստրային քարտեզների պատճենների յուրաքանչյուր օրինակի տրամադրման համար (գունավոր տպագրություն).	5000 դրամ
1) A0 (1.2x0.9 մ) ֆորմատ	2500
2) A1 ֆորմատ	դրամ
3) A2 ֆորմատ	1250
4) A3 ֆորմատ	դրամ

5) A4 ֆորմատ	625 դրամ 300 դրամ
4.22 Կադաստրային քարտեզների պատճենի տրամադրում էլեկտրոնային կրիչով՝ յուրաքանչյուր պատճեն. 1) ճկուն սկավառակի վրա 2) կոմպակտ սկավառակի վրա	500 դրամ 1000 դրամ
4.23 Կադաստրային քարտեզների քսերոպատճենների յուրաքանչյուր թերթի տրամադրման համար. 1) A0 (1.2x0.9 մ) ֆորմատ 2) A1 ֆորմատ 3) A2 ֆորմատ 4) A3 ֆորմատ 5) A4 ֆորմատ	600 դրամ 300 դրամ 150 դրամ 75 դրամ 30 դրամ
4.24 1:10 000-1:1 000 000 մասշտաբների տեղագրական գունավոր քարտեզների տրամադրման համար յուրաքանչյուր անվանակարգային (նոմենկլատուրային) թերթը.	6000 դրամ
4.25 1: 500-1 : 10 000 մասշտաբների տեղագրական սև-սպիտակ հատակագծերի տրամադրման համար յուրաքանչյուր անվանակարգային (նոմենկլատուրային) թերթը.	2000 դրամ
4.26 1: 10 000-1: 1 000 000 մասշտաբների տեղագրական քարտեզների և 1: 500-1: 10 000 մասշտաբների տեղագրական հատակագծերի անվանակարգային (նոմենկլատուրային) թերթի յուրաքանչյուր քսերոպատճենի տրամադրման համար.	1000 դրամ
4.27 Յուրաքանչյուր գեոդեզիական կետի կոորդինատի (աբսցիս, օրդինատ, բարձրություն) տրամադրման համար.	1000 դրամ
4.28 Անշարժ գույքի միավորի (հողամաս, շենք, շինություն) յուրաքանչյուր շրջադարձային կետի կամ անկյան կոորդինատի (աբսցիս, օրդինատ) տրամադրման համար.	100 դրամ
4.29 1: 500-1: 1 000 000 մասշտաբի տեղագրական հատակագծերի և քարտեզների յուրաքանչյուր անվանակարգային (նոմենկլատուրային) թերթի տրամադրման համար. 1) ռաստերային ֆորմատով 2) վեկտորային ֆորմատով	4000 դրամ 80000 դրամ
4.30 Օդալուսանկար ցանկացած մասշտաբի (18x18 կամ 23x23սմ) ռաստերային ֆորմատով տրամադրման համար.	1500 դրամ
4.31 Տիեզերական նկար 1մ-ից պակաս թույլատրելիության ռաստերային ֆորմատով, 1կմ ² տրամադրման համար.	12000 դրամ
4.32 Տիեզերական նկար 1մ-ից ավելի թույլատրելիություն ունեցող, ռաստերային ֆորմատով, 1կմ ² տրամադրման համար.	3000 դրամ
4.33 Աշխարհագրական օբյեկտի վերաբերյալ տեղեկանք տրամադրելու	1000

համար.	դրամ
4.34 Անշարժ գույքի միավորման և/կամ բաժանման վերաբերյալ համապատասխան հատակագիծ տրամադրելու համար.	20000 դրամ

5. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՄԻԱՎՈՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ

5.1 Բազմաբնակարան շենքերի բնակարանների միավորի և (կամ) բազմաբնակարան շենքի շինությունների սեփականատերերին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող տարածքների, ինչպես նաև շենքի պահպանման և սպասարկման համար անհրաժեշտ հողամասերի, (որոնք չեն հանդիսանում այլ անձանց սեփականություն) նկատմամբ իրավունքների պետական գրանցման համար.	
1) մինչև 160 քմ մակերեսով Երևան քաղաքի տարածքում	10000 դրամ
2) 160 քմ և ավելի մակերեսով Երևան քաղաքի տարածքում	30000 դրամ
3) մինչև 160 քմ մակերեսով Երևան քաղաքից դուրս	10000 դրամ
4) 160 քմ և ավելի մակերեսով Երևան քաղաքից դուրս	15000 դրամ
5.2 Բնակելի նշանակության անշարժ գույքի միավորի նկատմամբ իրավունքների պետական գրանցման համար.	
1) մինչև 200 քմ մակերեսով շինությամբ Երևան քաղաքի տարածքում	10000 դրամ
2) 200 քմ և ավելի մակերեսով շինությամբ Երևան քաղաքի տարածքում	40000 դրամ
3) մինչև 300 քմ մակերեսով շինությամբ Երևան քաղաքից դուրս	10000 դրամ
4) 300 քմ և ավելի մակերեսով շինությամբ Երևան քաղաքից դուրս	30000 դրամ
5.3 Չկառուցապատված հողամասերի միավորի նկատմամբ իրավունքների պետական գրանցման համար.	
1) մինչև 1000 քմ ներառյալ մակերեսով Երևան քաղաքի տարածքում	10000 դրամ
2) 1000 քմ-ից ավելի մակերեսով Երևան քաղաքի տարածքում	40000 դրամ
3) մինչև 1200 քմ ներառյալ մակերեսով Երևան քաղաքից դուրս	10000 դրամ
4) 1200 քմ-ից ավելի մակերեսով Երևան քաղաքից դուրս	15000 դրամ
5.4 Հասարակական և (կամ) արտադրական շենքերի, շինությունների (բացառությամբ գյուղատնտեսական արտադրական նշանակության անշարժ գույքի), ինչպես նաև բնակելի շենքերում՝ նախագծով նախատեսված ընդհանուր օգտագործման շինություններ (տարածքներ) չհանդիսացող ոչ բնակելի անշարժ գույքի միավորի նկատմամբ իրավունքների պետական գրանցման համար Երևան քաղաքի տարածքում.	

1)	մինչև 100 քմ մակերեսով շինությամբ	30000 դրամ
2)	100 քմ-ից մինչև 200 քմ մակերեսով շինությամբ	50000 դրամ
3)	200 քմ-ից մինչև 500 քմ մակերեսով շինությամբ	60000 դրամ
4)	500 քմ-ից մինչև 1000 քմ մակերեսով շինությամբ	70000 դրամ
5)	1000 քմ-ից մինչև 5000 քմ մակերեսով շինությամբ	80000 դրամ
6)	5000 քմ-ից մինչև 10000 քմ մակերեսով շինությամբ	150000 դրամ
7)	10000 քմ և ավելի մակերեսով շինությամբ	160000 դրամ
5.5	Հասարակական և (կամ) արտադրական շենքերի, շինությունների (բացառությամբ գյուղատնտեսական արտադրական նշանակության անշարժ գույքի), ինչպես նաև բնակելի շենքերում՝ նախագծով նախատեսված ընդհանուր օգտագործման շինություններ (տարածքներ) չհանդիսացող ոչ բնակելի անշարժ գույքի միավորի նկատմամբ իրավունքների պետական գրանցման համար Երևան քաղաքից դուրս.	
1)	մինչև 100 քմ մակերեսով շինությամբ	15000 դրամ
2)	100 քմ-ից մինչև 200 քմ մակերեսով շինությամբ	25000 դրամ
3)	200 քմ-ից մինչև 500 քմ մակերեսով շինությամբ	35000 դրամ
4)	500 քմ-ից մինչև 1000 քմ մակերեսով շինությամբ	45000 դրամ
5)	1000 քմ-ից մինչև 5000 քմ մակերեսով շինությամբ	55000 դրամ
6)	5000 քմ-ից մինչև 10000 քմ մակերեսով շինությամբ	65000 դրամ
7)	10000 քմ և ավելի մակերեսով շինությամբ	75000 դրամ
5.6	Գյուղատնտեսական արտադրական նշանակության անշարժ գույքի միավորի նկատմամբ իրավունքների պետական գրանցման համար.	
1)	մինչև 1000 քմ մակերեսով շինությամբ	15000 դրամ
2)	1000 քմ-ից մինչև 5000 քմ մակերեսով շինությամբ	25000 դրամ
3)	5000 քմ և ավելի մակերեսով շինությամբ	30000 դրամ
5.7	Գյուղատնտեսական նշանակության հողամասերի միավորի նկատմամբ իրավունքների պետական գրանցման համար.	
5.8	Անշարժ գույքի միավորի նկատմամբ իրավունքների սահմանափակումների պետական գրանցման համար.	2000 դրամ
5.9	Գյուղատնտեսական նշանակության հողամասերի միավորի նկատմամբ իրավունքների սահմանափակումների պետական գրանցման համար.	1000 դրամ
		500 դրամ

- 5.10 **Անշարժ գույքի** միավորի նկատմամբ իրավունքների **պետական** գրանցման վկայականների կամ նախկինում գույքագրման մարմինների կողմից տրված սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթերի կրկնօրինակ տալու համար. 7000 դրամ
- 5.11 Միջազգային կազմակերպությունների վարկերի և դրամաշնորհների, **պետական** բյուջեի միջոցների հաշվին կառուցված և քաղաքացիներին փոխանցված բազմաբնակարան շենքերի բնակարանների, անհատական բնակելի տների միավորի նկատմամբ իրավունքների **պետական** գրանցման, Շիրակի և Լոռու մարզերի համայնքներին հանձնված նախկին **պետական** բնակարանային ֆոնդի նկատմամբ համայնքի անվամբ իրավունքների **պետական** գրանցման, Շիրակի և Լոռու մարզերի բնակավայրերում **պետական** գնման պայմանագրով նախատեսված բնակարանային ֆոնդի կառուցապատման համար ձեռքբերված հողամասերի նկատմամբ սեփականության իրավունքի **պետական** գրանցման, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների վարկերի և դրամաշնորհների, **պետական** բյուջեի միջոցների հաշվին Շիրակի և Լոռու մարզերում կառուցված բնակելի ֆոնդի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի նվիրատվության, առուվաճառքի, պայմանագրի հիման վրա քաղաքացիների սեփականության իրավունքի **պետական** գրանցման համար 2000 դրամ
- 5.12 Շարժական **գույքի** գրավի կամ Լիզինգի պայմանագրով վարձակալության իրավունքի գրանցում կատարելու համար. 2000 դրամ
- 5.13 **Անշարժ գույքի** հասցեների գրանցում կատարելու և (կամ) գրանցված հասցեների փոփոխություն կատարելու համար. 2000 դրամ

6. ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱՂԻՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Անշարժ գույքի միավորի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների ու սահմանափակումների վերաբերյալ տեղեկանքի տրամադրում.

Բաժնում սահմանված տեղեկանքները տրամադրվում են.

- 4.1-ից 4.7 կետերում նշված տեղեկանքները - 2-րդ օրը
 4.8-4.17 և 4.33 կետերում նշված տեղեկանքները - 2-րդ օրը
 4.18 կետում նշված տեղեկանքը - 5 -րդ օրը
 4.19-4.32 կետերում նշված տեղեկանքները - 2 -րդ օրը
 4.34 կետում նշված հատակագիծը - 4-րդ օրը

Անշարժ գույքի միավորի նկատմամբ իրավունքների **պետական** գրանցում և վկայականի տրամադրում.

Պետական գրանցումը և վկայականի տրամադրումն իրականացվում է.

- Բնակելի նշանակության **անշարժ գույքի** և գյուղատնտեսական նշանակության հողերի համար - 3-րդ օրը
 Հասարակական և (կամ) արտադրական շենքերի, շինությունների, ինչպես նաև բնակելի շենքերում՝ նախագծով նախատեսված ընդհանուր օգտագործման շինություններ (տարածքներ) չհանդիսացող ոչ բնակելի և գյուղատնտեսական արտադրական **անշարժ գույքի** համար - 4 -րդ օրը
 Շարժական **գույքի** համար - 2-րդ օրը

7. ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված ցանկերում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերում գտնվող **անշարժ** և շարժական **գույքի** նկատմամբ «**Գույքի**» նկատմամբ իրավունքների **պետական** գրանցման և գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման վճարների ցանկում» սահմանված վճարները գանձվում են դրանց 50%-ի չափով: Սույն ցանկի 5-րդ Բաժնի 5.8 և 5.9 կետերում նշված գրանցման վճարներից ազատվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում **գույքի** նկատմամբ սահմանափակումներ կիրառելու լիազորություններ ունեցող իրավասու մարմինները: